Թիվ 12854180 կատարողական վարույթով գնային առաջարկ

2026-11-26 11:19:01

Հայտատու	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի 4-րդ մաս

ՈՒղարկվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի Հարկադիր կատարող Ա. Աբրահամյանի կողմից կայացված «Ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքում պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու մասին» որոշումը:
«Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով հարկադիր կատարողը նշանակում է փորձագետ, եթե՝
(...)
2) այդ մասին մինչև գույքի հարկադիր իրացման որոշում կայացնելը միջնորդել է կատարողական վարույթի մասնակիցը՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե վերջինս անհրաժեշտ ծախսերի՝ (որը կազմում է 29.124 ՀՀ դրամ) գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի թիվ 900333829019 դեպոզիտ հաշվին:
Որպես տվյալ գույքի սեփականության մասնակիցներ՝ տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հանձնվելու հաջորդ օրվանից 2 շաբաթվա ընթացքում իրավունք ունեք միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին՝ գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու համար՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե անհրաժեշտ ծախսերի գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարեք Ծառայության (համապատասխան ստորաբաժանման) դեպոզիտ հաշվին:
Նշված ժամկետում միջնորդության բացակայության պարագայում, ՀՀ Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքում գտնվող վկայականի համար թիվ 19022019-04-0053 անշարժ գույքի 1/3 բաժնեմասը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի (734.942 ՀՀ դրամի) 80%-ի չափով, որը կազմում է 587.954 ՀՀ դրամ իսկ ՀՀ Արմավիրի մարզի Բերքաշատ համայնքում գտնվող վկայականի համար թիվ 01032019-04-0036 անշարժ գույքի 1/3 բաժնեմասը հարկադիր

աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի (802.867 ՀՀ դրամի) 80%-ի չափով, որը կազմում է 642.294 ՀՀ դրամ։

12854180.pdf

37460713514

armavir@harkadir.am

ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 41Ա